

«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մոնավառության մատուցումը և դամբարանի կառուցում»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի հարևանությամբ մոնավառության մատուցումների և դամբարանի կառուցումը: Հաշվի առնելով, որ տաճարի ներսում մոնավառության արդյունքում որմնասկարները կեղտոտվում և վնասվում են, խիստ անհրաժեշտություն է առաջացել առանձին մոնավառության մատուցումը կառուցելը: Դամբարանում են հանգրվանելու հայոց կաթողիկոսների աճյունները, որտեղ հավատացյալները հնարավորություն են ունենալու աղոթելու նրանց հիշատակի համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ) (գրանցված՝ ԱՄՆ, Դելավերի նահանգ, Նյու Քեյս համայնք, 19808 ք. Վիլմինգտոն, Սենթրվիլ փ. 2711, #400 հասցեում, «29» մարտի 1955 թ., գրանցման թիվ՝ 0486313)
4.	Ծրագրի կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի քաղաք Էջմիածին, հոգևոր:
6.	Ծրագրի բյուջեն	1,777,627,163 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպություն, Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ քաղաք Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի մայիսի 25-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ը:

<p>9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</p>	<p>1. Մոնավառության մատուոնների և դամբարանի հիմքերի և պատերի ամրանավորման և բետոնային ու քարային աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի մայիսի 25-ից մինչև 2022 թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 863,101,616 դրամի չափով:</p> <p>2. Մոնավառության մատուոնների և դամբարանի ջեռուցման, օդափոխման, օդորակման համակարգի (HVAC) տեղադրման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 82,693,547 դրամի չափով:</p> <p>3. Մոնավառության մատուոնների և դամբարանի տանիքի կանաչապատման աշխատանքներ (տանիքի ջրամեկուսացում և ջերմամեկուսացում, բուսաճեցում): Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 19,732,000 դրամի չափով:</p> <p>- ջրամեկուսացման և ջերմամեկուսացման նյութերի, բույսերի, ոռոգման համակարգերի ներմուծում՝ 25,000,000 դրամ:</p> <p>4. Մոնավառության մատուոնների և դամբարանի հետին պարիսպի շինարարական աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի դեկտեմբերի 1-ից 2022 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 62,000,000 դրամի չափով:</p> <p>5. Պահակակետի կառույցի շինարարական աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի դեկտեմբերի 1-ից 2022 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 35,000,000 դրամի չափով:</p>
--	---

6. Տեխնիկական կառույցի՝ այդ թվում հասարակական սանհանգույցների շինարարական աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունիսի 1-ից 2022 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 115,000,000 դրամի չափով:

7. Ջրամատակարարման, կոյուղու և դրենաժային համակարգի շինմնտաժային աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունիսի 1-ից մինչև 2022 թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 20,000,000 դրամի չափով:

8. Մոմավառության մատուռների և դամբարանի էլեկտրական և ցածր լարման համակարգերի շինմնտաժային աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունիսի 1-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 41,000,000 դրամի չափով:

9. Հաշմանդամների համար նախատեսված վերելակի տեղադրման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունիսի 1-ից 2022 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 5,000,000 դրամի չափով:

- վերելակի ներմուծում՝ 9,600,000 դրամ

10. Լուսատուների ներմուծում: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի հոկտեմբերի 1-ից 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում 42,000,000 դրամի չափով:

11. Տեսաձայնային համակարգի տեղադրման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունիսի 1-ից 2022 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 75,000,000 դրամի չափով:

		<p>12. Մոնավառության մատուոների և դամբարանի շրջակա միջավայրի բարեկարգման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունիսի 1-ից 2022 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 125,580,000 դրամի չափով:</p> <p>- գրանիտե սալահատակների ներմուծում՝ 24,420,000 դրամ</p> <p>13. Ժամացույցի աշտարակի կից տարածքի բարեկարգման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի մայիսի 1-ից 2022 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 8,550,000 դրամի չափով:</p> <p>14. Մոնավառության մատուոների և դամբարանի ետնամասի կանաչապատման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունիսի 1-ից 2022 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 107,350,000 դրամի չափով:</p> <p>15. Խաչքարերի և այլ զարդաքանդակների փորագրման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունիսի 1-ից 2022 թվականի հունվարի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 75,000,000 դրամի չափով:</p> <p>16. Կահույքի մատակարարում: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունիսի 18-ից 2022 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 41,600,000 դրամի չափով:</p>
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>1. Մոնավառության մատուոների և դամբարանի հիմքերի և պատերի ամրանավորման և բետոնային ու քարային աշխատանքներ՝ 863,101,616 դրամ առանց ԱԱՀ-ի</p> <p>2. Մոնավառության մատուոների և դամբարանի ջեռուցման, օդափոխման, օդորակման (HVAC) համակարգի տեղադրման աշխատանքներ՝ 82,693,547 դրամ առանց ԱԱՀ-ի</p>

3. Մոնավառության մատուռների և դամբարանի տանիքի կանաչապատման աշխատանքներ (տանիքի ջրամեկուսացում և ջերմամեկուսացում, բուսաճեցում)՝ 19,732,000 դրամ առանց ԱԱՀ-ի
- ջրամեկուսացման և ջերմամեկուսացման նյութերի, բույսերի, ոռոգման համակարգերի ներմուծում՝ 25,000,000 դրամ
4. Մոնավառության մատուռների և դամբարանի հետին պարիսպի շինարարական աշխատանքներ՝ 62,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի
5. Պահակակետի կառույցի շինարարական աշխատանքներ՝ 35,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի
6. Տեխնիկական կառույցի՝ այդ թվում հասարակական սանհանգույցների շինարարական աշխատանքներ՝ 115,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի
7. Ջրամատակարարման, կոյուղու և դրենաժային համակարգի շինմնտաժային աշխատանքներ՝ 20,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի
8. Մոնավառության մատուռների և դամբարանի էլեկտրական և ցածր լարման համակարգերի շինմնտաժային աշխատանքներ՝ 41,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի
9. Հաշմանդամների համար նախատեսված վերելակի տեղադրման աշխատանքներ՝ 5,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի
- վերելակի ներմուծում՝ 9,600,000 դրամ
10. Լուսատուների ներմուծում՝ 42,000,000 դրամ

		<p>11. Տեսաձայնային համակարգի տեղադրման աշխատանքներ՝ 75,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի</p> <p>12. Մոնավառության մատուցների և դամբարանի շրջակա միջավայրի բարեկարգման աշխատանքներ՝ 125,580,000 դրամ առանց ԱԱՀ-ի</p> <p>- գրանիտե սալահատակների ներմուծում՝ 24,420,000 դրամ</p> <p>13. Ժամացույցի աշտարակի կից տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ 8,550,000 դրամ առանց ԱԱՀ-ի</p> <p>14. Մոնավառության մատուցների և դամբարանի ետնամասի կանաչապատման աշխատանքներ՝ 107,350,000 դրամ առանց ԱԱՀ-ի</p> <p>15. Խաչքարերի և այլ զարդաքանդակների փորագրման աշխատանքներ՝ 75,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի</p> <p>16. Կահույքի մատակարարում՝ 41,600,000 դրամ առանց ԱԱՀ-ի</p>
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ